



ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐԲ. ՀԱՅԱԳԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հանկարծահաա վիրահատությունից հետո, 1991 թ. հոկտեմբերի 8-ին, իր մահկանացուն կնքեց հայ թարգմանական գրականության անխոնջ հետազոտող, անվանի բնագրագետ Կիմ Մամբրեի Մուրադյանը. եզակի անատականություն, որը իր ողջ կյանքը անմնացորդ նվիրաբերեց հայագիտությանը: Կ. Մուրադյանն այն հազվադեպ հետազոտողներից էր, որոնք հավատարիմ էին մնացել հայ դասական բանասիրության ավանդներին: Չդավաճանելով իր հանդարտ խառնվածքին, նա գերադասում էր բարեխղճորեն ու մեկիկ-մեկիկ ժողովել սովորաբար աննկատ մնացած նյութերը և անշտապ շարադրել իր փաստառատ աշխատությունները: Նրա հետազոտությունները, որոնք գերազանցապես վերաբերում են տիեզերական եկեղեցու Կապադովկիայի թեմի երեք մեծ հայրերի՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության ուսումնասիրությանը, նոր փուլ են սկզբնավորում հայ թարգմանական, ավելի ճիշտ՝ հայացված ու ազգայնացված գրականության, աստվածաբանական, դավանաբանական ու հայրաբանական հուշարձանների հետազոտության բնագավառում:

Տքնանքով է անցել գիտնականը իր կենաց ճանապարհը: Ծնվել է 1938 թ. դեկտեմբերի 14-ին, Վրաստանի հանրապետության Ախալքալաքի շրջանի ցրտաշունչ Ղադոլար գյուղում, տոհմիկ կարնեցիների ընտանիքում:

Պատանի Կիմը 1960 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որն էլ հաջողությամբ ավարտում է 1965 թ.: Համալսարանական ուսումնառության տարիներին նրա մեջ անշեշտեր է արթնանում հայ միջնադարյան մատենագրության նկատմամբ՝ հրմտանալով հայ միջնադարյան թարգմանական մատենագրության ուսումնասիրության բնագավառում:

Ասպիրանտուրայում ուսանելու տարիներին լեզվաբան Արուսյակ Մուրադյանի օգնությամբ հաղթահարելով բյուզանդական շրջանի հունարենի դժվարությունները, երիտասարդ գիտնականը պատրաստում է իր առաջին՝ «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցարեան» հայ մատենագրության մեջ» ուսումնասիրությունը: Այդ աշխատությունը նա 1970 թ. ներկայացնում է որպես թեկնածուական ավարտաճառ, իսկ 1976 թ. հրատարակում առանձին գրքով:

Դեռևս ասպիրանտական տարիներին, նպատակադրվելով նվիրվել երեք մեծ կապադովկացիների՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու, միջնադարում հայերեն թարգմանված երկերի ուսում-

նասիրությանն ու հրապարակմանը, նա նյութեր է հավաքում «Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ» թեմայով: Այդ աշխատանքները ավարտվեցին 1983 թ., երբ լույս տեսավ եռաստեղության երկրորդ ներկայացուցչին նվիրված մենագրությունը: Այդ հետազոտությունը ջերմ արձագանքի արժանացավ հանրապետական ու արտասահմանյան գիտական մամուլում, իսկ հեղինակին 1985 թ. շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Սակայն գիտական աստիճաններն ու կոչումները չէ, որ ձգում էին հայագետին: Նա հետևողականորեն ձգտում էր ավարտել իր մտահղացած եռագրությունը: Եվ ահա 1990 թ. վերջին Կիմ Մուրադյանը հրատարակության է հանձնում «Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ» մենագրությունը: Նշված երեք աշխատությունները ամփոփում են հայագիտության երկու հարյուրամյա նվաճումները «երեք մեծ կապադովկացիների»՝ մեր ազգային մատենագրության հետ ունեցած աղերսների ուսումնասիրության բնագավառում: Այդ ուսումնասիրություններում լուսաբանվում է վաղ քրիստոնեական Եկեղեցու աստվածաբանության և դավանաբանության մշակման գործում այնքան մեծ ներդրում ունեցող կապադովկացի հեղինակների կենսագրությունը, Հայոց Եկեղեցու գործիչների և հայ մատենագրության հետ ունեցած առնչությունները, ներկայացվում են միջնադարյան Հայաստանում նրանց երկերին տրված գնահատականները և հայ դպրության մեջ հիշյալ հեղինակների համաստեղության թողած մատենագրական ժառանգության ազդեցության ոլորտները: Տպավորիչն այն է, որ այդ ամենն իրականացվել է ահռելի թվով ձեռագիր մատյանների ուսումնասիրությամբ ու առկոչումով, արժարժվող խնդիրներին վերաբերող անգամ ամենաաննշան փաստերի ու ամենափոքր հիշատակությունների արձանագրումով:

Հիրավի պատկառանք է հարուցում Կ. Մուրադյանի անտիպ ժառանգությունը: Հայագիտության մեջ առաջին անգամ նա կազմել էր Բարսեղ Կեսարացու «Պահոց գրքի» քննական բնագիրը, այսօր հայտնի ձեռագրերի հիման վրա պատրաստել էր Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» նոր հրատարակությունը, ավարտել էր Ղևոնդի Պատմության գրչագրերի համեմատությունը, որը կարող էր հիմք դառնալ բնագրի ճշգրտված հրատարակության համար:

Հավերժական հիշատակ անվանի հայագետին, արժանավոր քաղաքացուն և պայծառ մտավորականին:

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

ԿԻՄ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- 1 Բարսեղ Կեսարացին և հայերը (Կապադովկյան գործունեության շրջան) ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, թ. 9, էջ 49—61
- 2 Բարսեղ Կեսարացու «Վեցարեան», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, թ. 1, 79—88
- 3 Ս. Բարսեղ Կեսարացի, «Էջմիածին», 1970, թ. Գ, էջ 33—39
- 4 Բարսեղ Կեսարացու «Վեցարեայի» և Անանիա Շիրակացու որոշ երկերի տեքստաբանական առնչակցությունը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, թ. 3, էջ 99—107
- 5 Սրբագրություններ Բարսեղ Կեսարացու «Վեցարեայ»-ում, «Բանբեր մատենադարանի», թ. 10, Երևան, 1971, էջ 43—54

- 6 Գրչագիր վկայություններ Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունների մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, թ. 10, էջ 49—57
- 7 «Վեցօրեայի» հայերեն թարգմանության ժամանակն ու բնագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 3, էջ 161—173
- 8 Ս. Բարսեղ Կեսարացու ճաները, «Էջմիածին», 1973, թ. 8, էջ 20—25
- 9 Ընդհանուր հատվածներ ու սրբագրություններ Կեսարացու և Ծիրակացու գործերում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, թ. 1, էջ 55—72
- 10 Կեսարացու «Վեցօրեան» Ծիրակացու տիեզերական աշխատությունների աղբյուր, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, թ. 3, էջ 95—114
- 11 Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» նոր սրբագրություններ (ճառ Գ), «Հանդես Ամսօրեայ», 1976, թ. 1—12, էջ 577—590
- 12 Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, 272 էջ
գրախ. Հակոբյան Վ. Ա., ՊԲՀ, 1977, թ. 1, էջ 251—254
Արգաշյան Գ
- 13 Три гомилии Василия Кесарийского в древнеармянском переводе, «Кавказ и Византия», вып. I, Ереван, 1979, стр. 200—230
- 14 Древнеармянский перевод «Эпитафии» Григория Назианзина, «Кавказ и Византия», вып. 2, Ереван, 1980, стр. 155—217
- 15 Древнеармянские переводы гомилий Василия Кесарийского, «Кавказ и Византия», вып. 1982, стр. 180—215
- 16 Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, 264 էջ
գրախ. Անթարյան Փ. Փ., ՊԲՀ, 1984, թ. 1, էջ 205—207
G. Uluhogian, Բազմավեպ, 1984, թ. 3—4, էջ 347—350
- 17 Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցաօրեայ արարչութեան (աշխատասիրությամբ Կ. Մ. Մուրադյանի, Երևան, 1984, 380 էջ
գրախ. Սարգսյան Ա. Բ., ՊԲՀ, 1986, թ. 2, էջ 225—227
- 18 Василий Кесарийский и его «Шестоднев» в древнеармянской литературе. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук, Ереван, 1970, 26 с.
- 19 Григорий Назианзин в древнеармянской литературе. Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук, Ереван, 1986
- 20 Գրիգոր Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ճառի հայերեն թարգմանությունը և Մովսես Խորենացին, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, թ. 2, էջ 139—149
- 21 Ստեփանոս Սյունեցու և Ստեփանոս Ասողիկի մի ընդհանուր սկզբնաղբյուրի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, թ. 1, էջ 132—140
- 22 Բարսեղ Կեսարացու երեք թուղթ, «Էջմիածին», 1988, թ. ԺԱ—ԺԲ, էջ 104—118
- 23 Հովհան Օձնեցու մեկ սկզբնաղբյուրի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, թ. 3, էջ 85—88
- 24 Գրիգոր Նյուսացու «Երգ երգոցի մեկնության» հայերեն թարգմանությունը և Վարդան Արևելցին, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, թ. 3, էջ 118—126
- 25 Սկզբնաղբյուրին դիմելու Խորենացու ինքնատիպության շուրջ, «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը» միջազգային գիտաժողովի դրույթներ, Երևան, 1991, էջ 59—60
- 26 Գրիգոր Նյուսացու «Ի յիշատակի սրբոյն Թեոդորոսի...» ճառի հայերեն թարգմանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1991, թ. 2, էջ 21—28
- 27 Եղիշեի մի սկզբնաղբյուրի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թ. 1, էջ 58—61
- 28 Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թ. 3, էջ 101—111

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

- Բարսեղ Կեսարացի, Պահոց գիրք (աշխատասիրությամբ Կ. Մ. Մուրադյանի)
 Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ
 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (աշխատասիրությամբ Կ. Մ. Մուրադյանի)